ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՊՂԾՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)
SPECIAL TOPIC: ABOMINATION (OT)

Հիմնական նշանակությունը «նողկալի» կամ «գարշելի» է: Դա համարվում է հայտնի սահմանների դիտավորյալ խախտումը:
«Պղծություն» (BDB 1072, KB 1702) կարող է վերաբերել մի քանի բաների՝

1. Եգիպտացիների հետ կապված երևույթներին՝
   ա. նրանք գարշում էին եբրայեցիների հետ հաց ուտելուց, Ծնն. 43:32
   բ. նրանք գարշում էին հովիվներից, Ծնն. 46:34
   գ. նրանք գարշում էին եբրայեցիների զոհերից, Ելից 8:26

2. Իսրայելի գործողությունների հանդեպ ՅԱՀՎԵԻ ցուցաբերած զգացողությունների հետ կապված երևույթներ՝
   ա. անմաքուր կերակուր, 2 Օր. 14:3-20
   բ. կուռքեր, 2 Օր. 7:25, 27:15
   գ. հեթանոս վհուկները, 2 Օր. 18:9, 12
   դ. Մողոքին երեխաների զոհաբերությունը (այրելը), Ղևտ. 18:21, 20:2-5, 2 Օր. 12:31, 18:9, 12, 4 Թագ. 16:3, 17:17-18, 21:6, Երեմ. 32:35
   ե. Քանանացիների կռապաշտությունը, 2 Օր. 13:14, 17:4, 20:17-18, 32:16, Ես. 44:19, Երեմ. 16:18, Եզեկ. 5:11, 6:9, 11:18,21, 14:6, 16:50, 18:12
   զ. արատավոր կենդանիներ զոհաբերելը, 2 Օր. 17:1 (տես՝ 2 Օր. 15:19-23, Մաղ. 1:12-13)
   է. կուռքերին զոհեր մատուցելը, Երեմ. 44:4-5
   ը. նորից ամուսնանալ այն կնոջ հետ, որից նախկինում ամուսնալուծվել ես, 2 Օր. 24:1-4
   թ. կանայք, որ տղամարդու հագուստներ են հագնում (հավանաբար Քանանի պաշտամունքներում), 2 Օր. 22:5
   ժ. կուլտային մարմնավաճառությունից գումարը (քանանացիների պաշտամունքի մեջ), 2 Օր. 23:18
   ի. Իսրայելի կռապաշտությունը, Երեմ. 2:7
   լ. միասեռականությունը (հավանաբար քանանացիների պաշտամունքի մեջ), Ղևտա. 18:22, 20:13
   խ. կեղծ կշռաքարերի պգտագործումը, 2 Օր. 25:15-16, Առակ. 11:1, 20:23
   ծ. կերակրի օրենքների խախտումը (հավանաբար քանանացիների պաշտամունքի մեջ) 2 Օր. 14:3

3. Օրինակներ իմաստասիրական գրականությունից.
   ա. Հոբ 30:10 – Հոբը իր հասարակությանը
   բ. Սաղմոս 88:8 – սաղմոսերգուն իր ծանոթներին
   գ. Առակացում՝
      1) Առակ. 3:32 – խոտորված մարդը
      2) Առակ. 6:16-19
         (ա) ամբարտավան աչքեր, Առակ. 6:17ա
         (բ) ստախոս լեզու, Առակ. 6:17ա
         (գ) մարդասպան, Առակ. 6:17բ
         (դ) չար մտքեր հնարող, Առակ. 6:18ա, 15:26
         (ե) չարագործ, Առակ. 6:18բ
         (զ) անիրավ՝ սուտ վկա, Առակ. 6:19ա
         (է) եղբայրների միջև տարաձայնություն՝ կռիվ սերմանող, Առակ. 6:19բ
      3) Առակ. 11:1, 20:10, 23 – խաբեբա առևտրականները

4) Առակ. 11:20 – ծուռ սիրտ ունեցողները
5) Առակ. 12:22 – ստախոս շուրթերը
6) Առակ. 15:8, 21:27 – չարամիտների զոհերը
7) Առակ. 15:9 –ամբարշտի ճանապարհը
8) Առակ. 16:5 – հպարտ սիրտ ունեցողները
9) Առակ. 17:15
   (ա) ամբարշտին արդարացնողը
   (բ) արդարին դատապարտողը
10) Առակ. 28:9 – նա, ով խախտում է օրենքը

4. Պարբերաբար կրկնվող մի վախճանաբանական արտահայտություն կա՝ «ավերմունքի պղծություն», որը կիրառվում է Դանիելի գրքում (տես՝ Դան. 9:27, 11:31, 12:11): Այն կարծես թե նկատի ունի երեք տարբեր իրադարձություններ (բազմակի իրականացմամբ մարգարեություն)՝
   ա. Անտիոքոս IV Էպիֆանեսը, որը միջկտակարանյան Մակկաբայեցիների շրջանում էր (տես՝ 1 Մակ. 1:54, 59, 2 Մակ. 6:1-2):
   բ. Հռոմեացի գեներալ (հետագայում կայսրը) Տիտոսը, ով թալանեց Երուսաղեմը և կործանեց տաճարը մ. թ. 70թ-ին (տես՝ Մատթ. 24:15, Մարկ. 13:14, Ղուկ. 21:20):
   գ. վերջին ժամանակի առաջնորդը, որը կոչվում է «անօրինության մարդը» (տես՝ 2 Թեսաղ. 2:3-4) կամ «Հակաքրիստոսը» (տես՝ 1 Հովի. 2:18, 4:3, Հայտնություն 13):